

Ա. Վարդանյան
Լուսարար
Յաղակներ
1911թ.

891.91

Կ-30



1133
ՄԱՍԻ ՎԱՐԴՅՆԵՐ

72

**ՀՈՒՍԱԲԱՅԻ
ԾԱՂԻԿՆԵՐ**

1911

891.99
4-30

13 APR 2011

891.99

4-30

100

ԱՂԱՍՏԻ ՎԱՐԴԱՆԵԱՆ

541

ՀՈՒՍԱՐԱՑԻ ԾԱՂԻԿՆԵՐ

3916

Ո՞րն, ի՞նչ լաւ է լուսարացը, երբ ասդերը
գունաստ՛ում են, գունաստ՛ում են ու մարում:
Եւ սիրում են լուսարացը, երբ խնկարկւող
հորիզոնն է աղօթելով արցունքում...



1911

08.08.2013 13 APR 21

56890

Փառք ամենազարդ Սիրուն...

«Օրհնեցէք և բարձր արարէք զ'նա յա-
նիտեան»:

Սաղմոս:

ԱԼԷԿՍԱՆԴՐԱՊՈԼ
Տպարան Յ. Գ. Սանդեանցի
1911

Սաթիկս, իմ յաւերժագիղ ու հոռու լուսարաց, ես տենչում եմ քեզ ու քեզ համար հէքեաթներ եմ հիւսում...

Հէքեաթներ՝ որպէս ծաղիկները լուսարացի...

«Վաթսուն հին թաղուհիները, ութսուն՝
հարճերը և օրիորդներին թիւ չկայ:

«Մէկ հատիկ է իմ աղաւնին, իմ կա-
տարեալը, նա միամօր է, նա ընտրւած է իր
մօր համար. աղջիկները տեսան նրան և
երանեցին, թաղուհիներն ու հարճերն
էլ գովաբանեցին նրան...

«Դարձիր, դարձիր, ով Սուլամիթ, դար-
ձիր, դարձիր քեզ տեսնենք:

Ի՞նչ պիտի տեսնէք Սուլամիթի վրայ՝
ինչպէս Մանայէմի պարախումբըն է նա:

«Երգ երգոց»
Սողոմոնի.

Օ Ր Հ Ն Ե Ր Ք

«Սիրտս յափշտակել ես, ով քոյր իմ հարս,
սիրտս յափշտակել ես նալաճքներիդ մէկովը,
պարանոցիդ մանակներին մէկովը»...

Երգ երգոց

Արեւելքի մեծ բանաստեղծը, վշտահար
սիրոյ երգիչը կանգնած մրրկածուփ ծովի
ափին, իր հեռատես ու մտայոյզ հայեացքով
փրփուր ալիքներին էր նայում:

— Ի՞նչ ես օրոնում ծովի փրփուր ալիք-
ներին մէջ:

— Իմ զաւէլը, իմ աննման ու աստա-
ծաբեղ կոյսը հրաչեայ, քիչ առաջ նայել է
այս փրփուրներին, հիմա ես ուզում եմ
տեսնել նրանց այրելի... Երևի ծովը բոլոր-
ւելու է բոցով ու այրելու է իմ կախարդ
կոյսի կրակոտ հայեացքից...

Զե՞ որ իմ սիրտն էլ է այրել նրա մի-
միայն մի կախարդ հայեացքից:

— Մենք տեսանք քո զաւէլին, նա աղօ-
թում էր ու լալիս, մենք տեսանք ինչպէս
նրա բիւրեղ արցունքի կաթիլները մարդա-
րիտ ծովն էին հոսում, խառնւելով նրա
փրփուրների հետ...

— Մի՛ խ, կըչորանայ ծովը, կըցամաքի նա,
չէ որ իմ սիրտն էլ է ցամաքել նրա ար-
ցունքներից, նրա բիւրեղ արցունքներից:

— Փանք ամենակարող Սիրուն...

Փառք և օրհնութիւն հաղար ու բիւր
անգամ:

ሀ ሀ ቅ ኮ ሃ ሀ

U h P U L E Q

ՍԱԹԻԿՍ

Ա.

ՀԵՔԵԱԹ ՈՒ ԱՆՈՒՐՋ.

Հէքեաթ էր ոսկէ... Ես ու նա էինք
Ջերմ երջանկութեան ծիրանի հազել:
Երազ էր կարծես... Ես ու նա էինք
Արեւ-կարօտով իրարու զրկել:
Արևի շողով պարուրած ավազ
Ցնորքս էի ես համբուրում տենչով...
Ի՞նչ լաւ էր այնպէս, անուրջ էր անհաս,
Կեանքն էր բոլորապէս սէրս վարդերով...
Հէքեաթ էր ոսկէ. ես ու նա էինք
Համբոյրի զոդով ծրածան կապել...
Անուրջ էր, երանք... Ես ու նա էինք
Արեւ կարօտով իրարու զրկել...

I.

— Ի՞նչ լաւ են ուսում տերեւերը ծա-
ռերի:

— Նրանք մեզ են նախանձում:

— Խենթ, ի՞նչ ես ասում:

— Կախարդ.

Իմ համբոյրից կարմրեց նրա երեսը.

— Խենթ, ի՞նչ ես ասում:

II.

—Սաթիկս, եկա՞ր... Ես գիտէի, որ դու կ'գաս.

Նա ժպտաց՝ ես չէի ուզում գալ.

—Վաղն էլ կ'գաս, հա՛... շատ վաղ, այս օրւանից էլ վաղ:

—Չէ.

Նրա չարաճճի աչքերը ինձ էին նայում:

—Չմը.

Նա ծիծաղեց.

—Բո ծիծաղը ամենակարող է, էլ ոչ ոք չի ծիծաղում քեզ պէս:

—Միթէ՞—նրա ծիծաղը աւելի ուժգին թափւեց արծաթի պէս:

—Իմ հոգեւարքին քո ծիծաղը ինձ նոր կեանք կ'տայ:

—Ի՞նչ ես ասում, գի՛ժ.

—Ոչինչ, ես անմահ եմ.

Նրա հրաշագեղ աչքերը ինձ էին նայում սիրալիր.

—Ես անմահ եմ, չէ որ դու միշտ ես ինձ այդպէս նայելու...

III.

Ես ու նա սիրում էինք իրար:

Նա հագնում էր կարմիր, նա միշտ հագնում էր կարմիր:

—Սաթիկս, դու այդպէս չքնաղ ես, ինչի՞ ես նման:

—Արիւնի:

—Դու արիւնից թանգ ես ու կարմիր.

—Վարդի.

Դու վարդից հոտոտ ես ու կարմիր.

—Գինու.

—Դու գինուց արբեցնող ես ու կարմիր:

IV.

Մենք մենակ էինք.

— Երկու վարդեր են հղիլ՝ պատմում են
ես, կոյսի շրթունքների պէս.

— Ո՞վ է արդեօք սոխակին էդ գրաւիչ
ձայնը տւել՝ ասում է վարդերից մէկը.

— Դու, չէ որ նա միայն քեզ է սիրում,
ասում է միւսը...

— Ոչ, դու, չէ որ նա միայն քեզնով է
այրում...

— Ինչի՞ պատմեցիր այդ, հարցրից Սա-
թիկս.

— Այնպէս, ինձ թւաց, որ քո շրթունք-
ները վիճում են վարդերի պէս.

— Ես վաղը առաւօտ էլ չեմ գոյ այստեղ.

— Դու ինձ չե՞ս սիրում.

— Դե՛... ու փարւեց ինձանով:

— Սաթիկս... Հրեշտակ...

V.

— Ես նրան չեմ տեսել այսօր.

Արդեօք ի՞նչ է անում հիմա.

Սաթիկս...

Դուք գիտէ՞ք ով է իմ Սաթիկը...

— Մի թագուհի է հղիլ, նրանից գեղե-
ցիկ աշխարհի երեսին ոչինչ չէ հղիլ...

Բանաստեղծը նրան սիրում էր.

— Թագուհիս, դու անսման ես, թող ինձ
լուսամուտիդ տակ ապրեմ.

— Եթէ ինձ նման ուրիշը գտնե՞ս.

— Ես ինձ կ'սպանեմ:

Ու ամեն առաւօտ թագուհու լուսամուտի
տակ բանաստեղծը նրա համար հիմն էր
յօրինում:

Նա երջանիկ էր:

— Թագուհիս, դու հրաշագող ես, թող
ինձ վարսերդ սանրեմ.

— Եթէ ինձ պէս գեղեցիկ մէկը ծնւե՞ց.

— Ես կը մեռնեմ:

Ու ամեն առաւօտ թագուհու վարսերն
էր սանրում.

Նա ամենաերջանիկն էր աշխարհի.

Մի օր բանաստեղծը մի հէքեաթ գրեց
ու մեռաւ.

Նա իր թագուհու պէս գեղեցիկ հէքեաթ
էր գրել:

Բանաստեղծի թագուհու պէս գեղեցիկ
հէքեաթը գիտե՞ք.

Սաթիկս այդ հէքեաթն է...

VI.

—Վերջապէս.— սեղմեցին ինքն ձեռքը:

—Միթէ՞ ուշացայ: Ինչ լաւ իրիկուն է, կարծես մէկը հիւանդ, մէկը տխուր աղօթք է անում:

—Երբ դու ախրում ես, քո աչքերը իրիկունի են նմանում:

—Գի՛ժ, իսկ քո աչքերը... Խենթս, տես էն աստղը ի՞նչ լաւն է:

—Քո աչքերն են արտացոլում կապտազոյն երկնի մէջ:

Նա ժպտաց. Նա բռնեց ինքն ձեռքը.

—Ստի՛կ, — նա նայեց ինձ.

—Ի՞նչ.

—Նայի՛ր ինձ.

—Խո՛ւմ դիժ չե՞ս.

—Աչքերդ տուր ինձ, հա՛ Ստի՛կ... միմիայն էդ չար աչքերդ.

—Իսկ ե՞ս, — ծիծաղեց նա.

—Քեզ հարկաւոր չեն, դու չես տեսնում նրանց, տուր ինձ:

—Է՛հ, քեզի:

—Ստի՛կ, լսի՛ր. մի թաղաւոր հիւանդ է եղել.

—Նա մեռնում է, փրկեցէք, ասել է նա.

—Անբուժելի է, վճռում են աշխարհի գիտունները:

Թաղաւորը երազում մի հրաշեայ գաղէլ է տեսնում. Նա առաւօտ զարթնելիս տողջ է լինում:

Քո աչքերդ նման են էն հրաշեայ գաղէլի աչքերին:

—Ի՞նչ լաւ հէքեաթ է... Դու բանաստեղծ ես.

—Քեզանից եմ գողանում.

—Գի՛ժ.

—Գաղէլս...

VII

Նա տասնուկէց տարեկան է.

Նա մի «գիժ» պատանի.

—Եթէ մայրս իմանայ՝ ասում է նա.

—Թո՛ղ.

—Նա կարծում է, որ ես առաջւայ պէս անմեղ եմ.

—Բայց միթէ՞ հիմա անմեղ չես.

—Չէ՛, ժպտաց նա, ես քեզ սիրում եմ.

—Փոքրիկս.

—Դու առաջինն ես որին ես սիրել եմ.

—Դու առաջինն ես որին ես համբուրել եմ...



VIII.

Նրա պատկերը ես ունիմ.

Հիասքանչ է...

Վախենում եմ համբուրել...

— Սաթիկս, ի՞նչ արիր իմ պատկերը.

Նայիր... ու ցոյց տուց իր կուրծքը.

— Ես մեռնեմ ինձ թաղիր կրծքիդ վրայ.

— Դու չես մեռնի.

— Սաթիկս, հիմա ես դու.

— Քո՛նը.

— Իմը... ու համբուրեցի նրա շրթունք-
ները...

Առաջին անգամ...

Ո՞վ է համբուրում նորաբաց վարդին
լոյսը բացեւիտ.

Լուսարացի ցողը երջանիկ...

IX

Մի կարապ սիրելիս է եղել ծովափի շու-
շանին.

— Իմ լուսագեղ շուշան, ես պաշտում եմ
քեզ, ասեց կարապը.

— Ես չեմ հասկանում.

— Իմ հրաշագեղ շուշան, քո կարթուով
այրւում եմ ես, լացից կարապը.

— Ես չեմ հասկանում.

— Իմ աստածագեղ շուշան, ես մեռնում
եմ... երգեց կարապը.

— Երգիր, ես հասկանում եմ:

Ո՞վ է հասկացել հէքեաթը սիրոյ...

— Սաթիկս, դու ինձ միշտ ես սիրելու.

— Գիժ, մի՞թէ ես ուրիշին կարող եմ
սիրել...

— Ես կը փախցնեմ քեզ.

— Ես չեմ գայ՝ ժպտաց նա.

— Չար.

Ո՞վ է հասկանում սօնէտը սիրոյ...

Ե՞րբ է հասկացել շուշանը կարապին ..

X

— Խենթս, լսիր, ի՜նչ կամաց է շշուկը
ծառերի.

— Նրանք իրարու սէր են պատմում մե-
զանից գաղտնի.

— Մեզանից հիվ է շատ սիրում, մենք
թէ ծառերը.

— Ծառերը.

— Ո՛չ, մենք, տխրադէմ ասեց նա.

— Սաթիկս, հիվ կարող է սիրել ինձ պէս.

— Գի՛ժ, գնանք տուն.

— Քիչ էլ, անխիղճ ..

Նրա չարածճի ու խելացնոր աչքերը այր-
ւում էին ժպտով...

XI

Ես ծանոթացել եմ նրա հետ այս ամառ.
Նա իմ բարեկամուհին է։ Դուք գիտէ՞ք
իմ յիշատակարանը.

Ահա մի պատմութիւն նրանից՝

15 յուլիսի.

Սաթիկը հիասքանչ է։

17

Զբոսարան, նա ինձ շատ է դուր գալիս.

18

Երազումս տեսայ Սաթիկին, նա հագ-
նւած էր կարմիր, նա միշտ կարմիր է
հագնում...

Նա ծիծաղում էր փոքրիկ մանկան պէս.

21

Միթէ Սաթիկը նա չէ, որին երազում
են ու փառաբանում բանաստեղծները.

28

Սենեակի մթութեան մէջ ես և նա ենք.
Նա նստել է լուսամուտին, ես նրա ոտ-
ների մօտ, աթոռի վրայ.

Լուռ ենք.

— Ո՛ւՓ, Սաթիկ, եթէ քեզ խեղդեմ...

Նա լուռ է.

2 ռզստոսի.

Ես սիրում եմ նրան.

4

Կայարանից ենք վերադառնում.

Ի՜նչ լաւ է, ես նրա մողերն եմ շոյում...

— Սաթիկս...

10

Ես և նա նստած ենք.

Ես դողում եմ տենդորէն:
 Սաթիկս լուռ է:
 — Սաթիկ.
 — Ի՞նչ:
 — Հըմ... ոչինչ...
 Լուռ ենք:
 — Սաթիկ, ես սիրում եմ քեզ.
 — Ո՛ւֆ...
 — Ոչ, ոչ, Սաթիկ, ես հիւանդ եմ, ներիր.
 — Չէ՞ որ մենք բարեկամներ ենք.
 — Չըզիտեմ...
 Լուռ ենք.
 — Սաթիկ,
 — Մի տանջիր ինձ, խնդրում եմ.
 — Սաթիկ, միթէ՞ դու ինձ չես սիրում
 դողում եմ ես...
 — Ի՞նչ է պատահել քեզ, ինչի՞ ես դողում.
 — Չըզիտեմ:
 — Դու ինձ տանջում ես՝ լացեց նա:
 — Սաթիկս, դու ինձ սիրում ես... հա՛...
 — Միթէ չես տեսնում...
 — Դու ինձ սիրում ես, Սաթիկս, Սա-
 թիկս...
 Ու մեր երջանկութեան լացը խառնեց
 իրարում...

17

Ի՞նչ արեցի... ի՞նչպէս երեւամ նրան. նա
 ինձ տեսնելու պէս ծածկեց ձեռքերով երեսը.
 — Սաթիկս...

XII.

Ես հիւանդ էի, երկու օր է դուրս չէի
 եկել:

— Վերջապէս, ի՞նչ էիր անում:
 — Բեզ էի կարօտում.
 — Սուտ ես տսում, ինչի՞ չէիր երևում.
 — Հիւանդ էի.
 — Ոչ, դու խոյս ես տալիս ինձանից.
 — Սաթիկ...
 — Հա, Սաթիկ, ես գիտեմ, դու դուրս
 եկել ես:
 — Ինչպէ՞ս կարող էի դուրս գալ և չգալ
 քեզ տեսնելու:
 — Դու ինձ դադարի ես նայել.
 — Փոքրիկս... Ժպտացի ես.
 — Լսիր հիմա էլ ես մի հէքեթ պատմեմ.
 — Ճի՞շտ...
 — Աշխարհում մի երգիչ է եղել և ես
 նրան սիրել եմ...

Նրա կարկաչ ծիծաղը թափեց հեղեղի
 պէս:

— Ի՞նչն է երջանկութիւնը, իմաստը,
 վայելքը կեանքի,

Սաթիկս, դու իմն ես ու դու եո՛ւ եր-
 ջանկութիւնը, իմաստը, վայելքը իմ կեանքի:

XIII

— Ի՞նչ լաւ է անտառը ամառ երեկոյին.
 — Հիասքանչ է քեզ պէս.
 — Գիժս, մայրիկիս ասել են որ մենք
 միշտ միասին ենք լինում:
 — Թող, չէ որ մենք բարեկամներ ենք՝
 ժպտացի ես.
 — Մի հէքեաթ պատմես.
 — Լինում է մի թռչուն, այ էն թռչունի
 պէս, տեսնում ես.
 — Ի՞նչ լաւն է.
 — Նա սիրում է իր բարեկամ թռչնակին
 ու նրա համար հէքեաթներ է պատմում...
 — Ինչպէս դո՛ւ.
 — Այո՛, ինչպէս ես քեզ համար...
 — Գիժ--ծիծաղեց նա.
 — Էլ հէքեաթ ասե՛մ.
 — Ասա.
 — Աշխարհի երեսին մի արեանման սուր-
 թանուէր է լինում:
 Մի օր նա պահանջում է երգչից, որ նա
 մի հէքեաթ ասի.
 — Դու գեղեցիկ ես օրպէս ոչ ոք՝ երգում
 է նա.
 — Համբուրիք ինձ, ասում է սուրթանուէրին:
 Երգիչը համբուրում է ու մեռնում.
 — Իսկ սուրթանուէրին ի՞նչ է անում.
 — Հրամայում է երգիչներին զլխատել...
 — Սու՛տ ես ասում:
 — Սուրթանուէրիս, ճիշտ եմ ասում—համ-
 բուրեցի ես—բայց ես ինչի՞ չեմ մեռնում...
 — Դու գիժ ես...
 — Դու ի՞նչ ես...

XIV

Ես հարբած եմ:
 — Ընկերս, ես սիրում եմ:
 — Ո՛ւմ.
 — Ո՛վ է գեղեցիկը աշխարհի...
 Ի՞նչն է Աստուածը գեղապաշտ հոգիներէ.
 — Ցնորքը.
 — Ցնորքը չունի թովհանքը նրա.
 — Լուսաստղը
 — Լուսաստղը չունի կայծը նրա ժպտի.
 — Իսկ ո՞վ,
 — Սաթիկս:
 — Դէ՛հ խմիր:
 — Ես խմում եմ նրա կենացը, որովհետեւ
 նա է իմ սէրը ու իմ հանգրւանը:
 — Ես խմում եմ նրա կենացը, որովհետեւ
 նա քոնն է.
 — Ես թագաւոր եմ. երանի քեզ, որ ինձ
 հետ հարբում ես.
 — Թող...
 — Ընկեր իմ, ի՞նչ է այս գինին, ես ու-
 նեմ գինի հաղապիւտ, մեռնից ծորող ու
 հոտոտ...
 — Ո՞րտեղից.
 — Նրա նուաշրթունքների գեղ ժպտը
 զիսե՛ս՝
 Նա է իմ գինին ու ես հարբում եմ նրանց
 նայելով...
 — Դու կըգժւես.
 — Լսիր ինչ են պատմում.
 Սպահանի թագաւորը երազում մի կնոջ
 է տեսնում ու սիրահարւում է:

Նա երկաթէ քոշ է հագնում, երկաթէ
զաւազան առնում ու աշխարհ է ընկնում
նրան գտնելու...

Եւ չի գտնում.

Ցանկանում է գոնէ մէկ էլ տեսնել նրան
երազով, բայց չի տեսնում.

Հաշիշով է արբում ու չի երազում նրան:

Մի օր թագաւորը հարբած ժամանակ
տեսնում է նրա պատկերը գինու մէջ ցո-
լալիս...

Ու հրամայում է իր երկրում գինուն
մեծ տօն կատարել...

*
*
*

— Ընկերս, երգիր, հիմա նա անսւշ
քնած է:

— Ի՞նչ երգեմ.

— Երգիր այնպէս, որ լուսաստղը ար-
ցունքէ:

— «Սե աչերէն շատ վախեցիր» — երգեց
նա:

— Բանաստեղծը սխալում է, սե աչերը
դու շատ սիրիր...

— Դու գիտ փոքր ես:

XV

— Սաթիկս, դու ինձ սիրում ես՝ ժպտա-
ցաւ ես.

— Միթէ կասկածում ես.

— Ես չեմ կասկածում, ես հաւատում եմ,
եւ ուզում եմ խենթի պէս հաւատալ քեզ.

— Էլ ինչո՞ւ ես հարցնում.

— Չ'զիտեմ, վախենում եմ.

Ու կամաց մօտեցայ շրթունքներին՝ համ-
բուրելու:

— Ի՞նչ գեղեցիկ են շրթունքներդ...

Նա ժպտաց.

— Սաթիկս.

— Էլ ի՞նչ ես ուզում.

— Ոչինչ, չէ՞ որ դու ինձ սիրում ես...

— Ինչի՞ նայեցիր յանկարծ երկնին.

— Սաթիկս, ինձ թւաց որ գլխիս վերեւ
մահի գերանդին է պսպղում...

— Դու խկապէս գիժ ես.

— Ասում են մարդ երջանկութիւնը զգա-
լուց յետոյ պիտի մեռնի.

— Նա ամուր, ամուր սեղմեց ինձ:

XVI

Ի՞նչ վատ օր է:

Եթէ յանկարծ նա մոռանայ ինձ.

— Սաթիկս, ես մօրդ կասեմ.

— Մայրս հասկացիլ է.

— Թո՛ղ.

— Նա ինձ անարգում է, նա ասում է
անկարելի է, մենք բարեկամներ ենք.

— Ինչպէս.

— Նա ասում է, որ հայրս չի համա-
ձայնել...

Լուռ ենք:

— Սաթիկս, լսիր ի՞նչ են պատմում.

«Մարդը ու մահը պատահում են իրար.

— Ես ուզում եմ դեռ ապրել.

— Ապրիր, ու երբ կըրեզարես ինձ կան-
չիւր.

Տարիներ են անցնում:

Մարդը մի օր երջանկութիւնը երկար և
զուր որոնելուց յետոյ «ախ» է արձակում.

— Բեզարեցի՞ր, գնանք՝ յայտնում է մահը:

— Քիչ էլ՝ աղաչեց մարդը.

— Ձեմ կարող, գնանք.

Կէս ճանապարհին մարդը պատահում է
իր երջանկութեանը.

— Նա, սպասիր.

— Ձեմ կարող...»

— Սաթիկս, եթէ յանկարծ մենք էլ հառա-
չենք մահւան կանչով.

— Դու վատն ես, լաւ հէքեաթ չէր.

— Սաթիկս,

— Խեղճ.

Ու փարեցինք իրար ամսւր, ամսւր...

— Ես կուզէի հէնց հիմա մեռնել.

— Դու չես մեռնի...

XVII

Դպրոցի առաջին օրն է և ես ուշացել եմ.

Ու՛ր ի՞նչ վատ է սրահում.

Դասարկ... կամարածե՛լ...

Ծառաներից մէկը ննջում էր անկիւնում
անհաշտ շէմքով...

Դասեր .. ու մի ամբողջ տարի...

Ձանգերը հնչեցին հրկար սրահում ան-
հիւրնկալ, աններդաշնակ...

XVIII

—Սաթիկս, ես մօրդ այսօր անպատճառ
կասեմ.

—Նա ուզում է գնալ ձեր տուն.

—Մեր տուն, ինչի՞:

—Ձգիտեմ.

—Սաթիկս, դու ինձ սիրում ես չէ՞...
Նա հայեց ինձ:

—Սաթիկս, ես ամենին կ'յաղթեմ... Ձէ՞
որ դու ինձ սիրում ես...

—Գիժ, մօրս մի ասիր.

—Կ'ասեմ... Դու իմն ես, իմն ես լինելու...

XIX

Սհա իմ յիշատակարանը.

20 օգոստոսի.

Նա շատ է տանջում, նա շատ է սի-
րում ինձ.

21

—Դե՛ս, մոռացիր ինձ... Նա արժանի չեմ:

—Դու ինձ կ'մոռանաս...

—Ձէ... նրա ասուած ազեղ աչքերը այ-
րում էին վայելքավառ ցնորքով.

27

Ուզում եմ, որ իմ սէրն աշխարհն իմա-
նայ, ինչո՞ւ:

28

Այսօր իմ ամենաերջանիկ օրն է...

Ի՛նչ շուտ անցաւ.

Ձէ որ իսկական երջանկութիւնը յա-
րտեա չէ...

31

Վաղը դպրոցի օր է... Ի՛նչ շուտ ան-
ցաւ ամառը:

Իմ ամենաերջանիկ ամառը:

2 սեպտեմբերի.

Դասերս թողի դուրս եկայ.

Անտանդի է...

3

Նրանք ամեն ինչ գիտեն... Երևի ինձ
կ'արդելեն նրա հետ լինելու...

Մերօնք էլ գիտեն.

Ամենքը:

XX

- Սաթիկ, կանչում եմ հս.
Նա չի լսում.
—Սաթիկ.
Նա չի նայում ինձ.
—Միթէ՞ այսպէս շուտ՝ մտածում եմ հս.
—Սաթիկ.
—Ի՞նչ, գնահ, մեղ կըտեսնեն... ինձ ար-
գելիկ են քեզ հետ լինիկ.
—Սաթիկ, միմիայն մի խօսք.
—Ձեմ կարող.
—Խնդրում եմ.
—Ու՛ֆ, յետոյ, տես ինչպէս նայում են.
սպասիր ինձ ժամի 11-ին.
—Խարում ես, չես գալ.
—Միթէ՞ չես հաւատում.
—Նայիր ինձ... լաւ: Կսպասիմ:

XXI

- Վերջապէս.
—Շնտ սպասեցիր.
—Անսահման.
—Մենք ուշ-ուշ ենք տեսնուիլու.
—Նրանք համաձայն չեն, բայց մենք
համաձայն ենք, չէ՞ Սաթիկս.
—Գիժս, դու ինձ երբէք չէ՞ս մոռանայ.
Ու մենք սիրոյ նշան կապեցինք.
—Սաթիկս, մի հէքիաթ պատմիր, չէ՞
որ ես շատ եմ պատմել.
—«Մի թագաւոր է եղի. այնքան է
սիրել իր թագուհուն, որ երբ մեռել է
նա, թագաւորը ինքն իրեն կուրացրել է:
Նա չէ ուզեցել ուրիշ կանանց տեսնել»
Նա այդպէս շատ է սիրել իր թագու-
հուն, իսկ ես նրանից էլ շատ եմ սիրում քեզ...
—Փոքրիկս... դու հրաշագեղ ես.
—Սուտ ես ասում.
—Դու քո պատմած թագաւորի թագու-
հուց էլ գեղեցիկ ես. եթէ դու միռնես ես
ի՞նչ տեսնում...
—Ոչինչ.
—Ինչպէս ինձ սիրում ես...
—Շնտ...
—Որքան:
—Այսքան՝ ու արծաթ-ծիծաղի տարափի
տակ նա բացեց իր թևերը քնին... քնին...
—Ի՞նչն է անուրջը, թովչանքը, իմաս-
տը կեանքի.
Սաթիկս, դու իմն ես ու դու ես անուր-
ջը, թովչանքը, իմաստը իմ կեանքի...

— Խենթս, ես քեզ հարկաւոր բան ունիմ
ասելու...

— Ասա.

— Գնանք.

— Դէ՛հ սկսիր.

— Ես պիտի ասեմ, որ մոռանաւ ինձ,
խնդրում եմ, աղաչում...

Ես անշարժ մնացի:

— Սիրիւր ինձ որպէս քրոջ.

— Իսկ դու ինձ կը մոռանաս.

— Հա. — վախենալով արտասանեց ու նա-
յեց ինձ.

— Եթէ ես մեռնեմ, Սաթիկ, քնիւր Սաթիկ...

— Ինձ ամեքը տանջում են, գոնէ դու
մի տանջիր...

— Սաթիկ, միթէ՞ դու ուրիշին ես սի-
րելու.

— Ինձ համար սէրը մեռաւ, ես սրանից
յետոյ էլ ոչ ոքի չեմ կարող սիրել.

— Քնիւր, քնիւր Սաթիկ...

* *

— Ինձ հեռացնելու են քաղաքից.

— Թող, չէ՞ որ դու ինձ չես մոռանայ.

Ու մենք գրկուեցինք.

Նա այնպէս բարի՛ քրոջ պէս, մօր պէս
գուրգուրում էր ինձ.

Զլինի թէ՞ վերջին տեղում...

Շրթունքներս այրւում են...

Երկու սիրահարներ են եղել.

— Իմ թագուհի, թող վարսերդ զառզա-
րեմ շողով արեւի...

— Ի՛մ ախպէր, թե՛ղ ձեռներդ լւամ մեռո-
նանման վարդաշրով:

Նրանք համբուրւել են ու բաժանւել.

Պատանին գնացել է որսի ու անտա-
ռում մոլորւել է անդամբ, անդամբ...

Թագուհին հասկացել էր այդ՝ երբ զգա-
ցել է, որ իր շրթունքները այրւում են կրա-
կի պէս.

Սիրոյ վերջին համբոյրից այրւել էին
շրթունքները...

XXIII

Մենք կայարանում ենք.

Նա գնում է.

Շոգէշարժը կանգնած հսկայի պէս հե-
տում է. —

— Նրան կորցնում ես... Նրան կորցնում
ես...

Ես կը գժւեմ. միթէ նա գնալու է առանց
մի խօսք տեսելու.

Այո, յիշում եմ, նա ինձ պատուիրել էր
չ՛գալ կայարան:

— Նրան կորցնում ես, անդամբ... ան-
դամբ...

Երրորդ զանգն է: Շոգէշարժը ցնցւեց: Ես
սթափւեցի:

Շոգէշարժը սլացաւ...

— Անաստան, հիւր...

Ու նրան չ'տեսայ:

Շոգէշարժը՝ էն հսկան նրան թոցրեց...

— Նրան կորցնում ես... անդամբ... ան-
դամբ...

—

Բ.

ԿԱՐՕՏ ՈՒ ԹԱՂՈՒՄ

Դու չըկաս, դու չըկաս... չըլինի՛ր յաւիտեան...

էն լացող, ցնորող զանգերը մահածին

Արդեօք ո՞ւմ սե թաղում տխրօրէն գուժեցին...

Դու չըկաս, դու չըկաս... չըլինի՛ր յաւիտեան...

Քեզ կարօտ, ես կարօտ պիտ մնամ յաւիտեան ..

Դժգոհած, դալկացած հորիզոնն է բուրվառում

Մահացող, դողացող արեւին կարմրաւուն:

Քեզ կարօտ, դեռ կարօտ՝ թաղեցի յաւիտեան...

I

— Գուցէ՛ գայ, ո՞վ գիտէ... սուսում են
աշունհար տերեւները.

— Նա ուշացաւ բայց նա կը գայ. . Ես գի-
տեմ դուք սգուր էք:

— Մենք չորանում ենք անամառ... մենք
գունատում ենք ամառի յուշով... մենք
չենք սիրում հէքեաթը աշնան...

Ու պատմեցին հէքեաթը աշնան՝

— Տերեաթափ մենք մեռնում ենք արևի
կարօտով, անյոյս... անյոյս ..

— Կարապը լալիս է շուշանի մահը.

— Բանաստեղծը հէքեաթացնում է ար-
ցունքը իր թաղուհու...»

Աշունը՝

— Ես այրում եմ կարօտով նրա:

II

—Ե՛կ, գաղէլս, եկ...

Ես տենչում եմ քեզ, եկ զրկիր ինձ, ես մենակ եմ...

—Պժուպ-րժու... պժուպ-րժու...

—Էդ դժն ես, ժամ ես կանչում ինձ պէս:
Ես յիշում եմ, երբ մի տնոյում այս ծառի
մօտ համբուրում էի նրան, դու էլի կան-
չեցիր.

—Պուպ-րժու... պուպ-րժու...

III

—Ցուրտ է.

—Կանչիր, յիշիր նրան ու տաքացիր...

—Ես կարօտ եմ քեզ, քո ձեռներին, քո
զարկերին... Ե՛կ, պարուրիր ինձ քո հուր
կրքի բոցով, եկ, այրիր ինձ... ես ուզում
եմ քեզ, եկ...

—Նա չի լսում.

—Չի կարող չ'լսել... նրա սիրտը հիմա
տրոփում է իմ կոնչից.

—Քո խենթ կանչից...

—Թաղիր ինձ, թաղիր ինձ քո հուր աչ-
քերի կրակի մէջ, պարփակիր ինձ քո ցոլք
հայեացքի փայլանքով, այրիր, արեցրո՛ւ
ու տուր ինձ մոռացում քո յաւերժավառ
ցնորք—վայելքով...

Ե՛կ, գաղէլս, եկ...

IV

— Ձիւնը ծածկեց, ծածկեց այն ճանապարհը, որով ես ու նա սիրում էինք թափառել... Ձիւնը, ձմեռը...

— Ձիւնը միշտ սիրում է ծածկել ամեն ինչ մոռացման սպիտակ շղարշով...

— Իմ հողում երբէք ձմեռ չի կարող լինել, այնտեղ ոչ ոք չի կարող տեսնել մոռացման սպիտակ շղարշ...

V

Լճի եզրին մի սիրուն ծաղիկ է եղել:

Լիճը նրան սիրել է:

— Իմ գունազեղ ծաղիկ, ինչ լման ես՝ օրօրի է նրան լիճը իր փոքրիկ կոհակներով:

— Իմ սիրասուն ծաղիկ, դու իմն ես՝ համբուրել է նրան լիճը իր վճիտ շրթունքներով:

Աշնանը լճափի ծաղիկը չորանում է:

— Դու մեռնիր, իմ քնքոյշ ծաղիկ, հառաչել է լիճը գուրգուրելով նրան:

— Դու մեռնիր իմ միակ բնիկեր, տիրել է լիճը ու մեղմօրէն շրջել նրա կուրծքը չորացած...

Չմեռւայ ձիւնով թաղեց մի օր ծաղիկը:

Լիճը որոնեց նրան ու չ'գտաւ:

— Իմ երկնազեղ ծաղիկ, հէր ես դու, կարօտաւառ լացել է լիճը:

— Իմ միակ մխիթան, իմ վայելքազեղ ծաղիկ, դու չ'կաս...

Ու սէր-կարօտի հառաչով սառել է լիճը...

VI

Նա գնաց հեռով, հեռով աշխարհներ:
Նա սիրում էր ինձ ու զնաց՝ նա, որը
միշտ կարմիր էր հագնում...

Կարմիր՝ վերջալոյսի պէս:

Մի ծաղիկ է հղել՝ սպիտակ, կարապի
թևի նման.

— Դու ի՞նչ գոյն կուզէիր ստանալ:

— Կարօտի, չէ որ հա այրում եմ սիրոյ
կարօտով.

Նա վերջալոյսի գոյն է ստացել:

Կարմիր... վարդի պէս կարմիր:

VII

Ասում են նա շուտով կ'վերադառնայ.

Ես ամեն օր կայարան հմ գնում:

— Տէր իմ, ինչո՞ւ նա չ'հեղա այսօր.

— Երևի վաղն է գալու.

— Ոչ, ինձ թւում էր, որ նա այսօր ան-
պատճառ պիտի գայ, չէ որ հա նրան պա-
տահիլուց առաջ միշտ նախազուշակիլ հմ այդ:
Բայց նա այսօր չեկաւ... ինչո՞ւ:

VIII

Ծաղիկները թռչնում էին գիշերով.

— Մենք չենք կարող ապրել առանց լուսարաց...

Մենք չենք կարող ծաղիկի առանց նրա ցողին կենսաբայր...

Բացվիր, շատագուցւիր շուտով մեր ամենողորմ ու ամենաբարի լուսարաց...

Ծաղիկները մանկազարթ օրհներգում էին ցողած.

— Մեր թռչնած սիրտը ցողեցիր ու մենք քոնն ենք ցողաշատ լուսարաց...

— Մեր հիւանդ հոգին բուժեցիր ու մենք քեզ ենք պաշտում, կենսատու լուսարաց...

Ծաղիկները մանկազարթ, ծաղիկները լուսարացի ապրեցին յուէրով...

Ի՞նչ լաւ է լուսարացին տենչալ նրան, նա՛ որը լուսարացի պէս բարի էր ու քնքոյշ...

Արդեօք ծագելու ես, իմ ցնորագեղ լուսարաց...

Սաթիկս, իմ յուէրժագեղ ու հոռու լուսարաց, արդեօք լսում ես ինձ.

Ես տենչում եմ քեզ ու քեզ համար հէքեաթներ եմ հիւսում.

Հէքեաթներ՝ որպէս ծաղիկները լուսարացի...

IX

Ահա իմ յիշատակարանը՝

Հոկտեմբերի 3-ը.

Նա այսօր զնաց հեռու, հեռու...

28.

Նրա լուսամտաները ամայի, դատարկ...

Նոյեմբերի 20.

Ի՞նչ գրեմ, ձիւն, ձմեռ ու նա էլ չկայ.

Դեկտեմբերի 10.

Ասում են նա վաղը գալու է: Միթէ ճիշտ է:

20

Ես նրան տեսայ... և ի՞նչ...

X

Քնքնէ տատրակըս, դու անձանօթի,
Դու օտարի պէս մօտովս անցար...
Ինչ կղան քեզի, որ հուր կարօտի
Ծով-արցունքներդ այդպէս շուտ մոռցար...
Աւ. Իսահակեան

Միթէ նա էր...

Մաղերը հաւաքած, և ինչպէս մեծացել է:
Նա ինձ չըճանաչեց: Նա անցաւ մօտովս
ու չբարեկեց:

— Ընկերս, դու ճանաչումես դրան:

— Միթէ քո գաղէլը չէ...

— Իմ գաղելը... այո նա է.

Իմ գաղէլը... որը ինձ չէ ճանաչում...

XI

— Նա քեզ մոռացաւ, նա քեզ մոռացաւ...

— Նա չէ մոռացել, նա չէ մոռանալու...

Սաթիկս, ևս հաւատում եմ քեզ առաջնայ
նման... Դու ամենակարող ևս ու ևս քեզ
պաշտում եմ:

«Մի հզօր թագաւոր անտառում թափա-
ռելիս տեսել է մի մառախուռ հմայել է
նրանով...»

— Ինձ համար վրան խփեցէ՛ք այս ծառի
տակ, էլ պալատ չեմ վերադառնալու...
Ես ուզում եմ իմ ամենագեղ մառախին մէկ
էլ տեսնել...

Տարիներ ևս անցնում շարան-շարան,
բայց թագաւորը անտառում դեռ օրոնում էր
իր մառախին...

— Զմէր ևս օրոնում նրան...

Թագաւորը անսաստն էր ու անխախտ...

Թագաւորը մեռնում էր՝

— Նա, մառախ. . ու ինչ հրաշալի է.—
հառաչեց նա մահաւան կանչով...

Աթիկի, մի միայն մի խօսք:

—Ի՞նչ.

—Ես ձեզ նամակ եմ գրել, առէք նրան յետ:

—Ե՞րբ...

—Չգիտեմ երբ, ես ձեզ գրել եմ.

—Ի՞նչ նամակ... ծիծաղեց նա զսպառ.

—Միթէ մոռացել էք:

—Ես այրել եմ... ու նա գնաց:

Ինչ թուում էր, որ արար-աշխարհ ծիծաղում է:

—Ե՞րբ... ի՞նչ նամակ:

Ու ամբողջ տարին

Մի միտք է անում,

Թէ ետը ետին...

Ո՞նց է մոռանում...

Յով. Թումանյան:

Ես գնում եմ այն ճանապարհով, որով մենք միասին շատ ենք գնացել:

—Սաթիկդ, որքան նա քեզ սիրում էր.—

խօսում էին քարերը ճանապարհի...

—Նա ինչ սիրում էր, միթէ նա հիմա էլ չի սիրում...

Քարերը ծիծաղեցին.—

—Ե՞րբ... ի՞նչ նամակ...

Այս մեծ ծառի տակ ես համբուրեցի նրա շրթունքները առաջին անգամ...

—Պո՛ւր-պո՛ւ պո՛ւր-պո՛ւ...

—Դու դեռ կանչում ես, միթէ չես մոռացել այն օրը...

—Պո՛ւր-պո՛ւ... նա էլ... նա էլ չէ մոռացել:

—Այո, չէ մոռացել, ես գիտեմ... երբ ես նայում եմ նրա շրթունքներին, նրանք դողում են...

Ու նրանք դեռ երկնք, երկնք են դողալու:

Ես հարբած եմ:

Հարբած եմ գինիով, որի մէջ Սպահանի
թագաւորը տեսաւ երկրորդ անգամ իր սի-
րածի պատկերը:

— Ընկերս, երբեք «Սև-աչերը» որովհե-
տե իմ մատաղ սիրտը: նրանք «արուն-ծով»
դարձրին.

— Դու շատ ես հարբած:

— Ես հարբած եմ, ոչինչ, վերցրու բա-
ժակը ու խմենք նրա կենացը...

Ես չեմ հաւատում աշխարհի ասածին,
միթէ նա կարող է ինձ մոռանալ, միթէ ես
կարող եմ մոռանալ նրան...

Խմիր նրա կենացը, որովհետեւ նա գեղե-
ցիկ է առաջւայ պէս...

Ես թագաւոր եմ, չէ՞ որ թագաւորներն
են միայն յաւիտեան սիրում...

— Դու շատ ես խմում:

— Որովհետեւ այսօր նրա թաղումն եմ ու-
զում տօնել: Նրա թաղումը իմ հոգում, թա-
ղումը որը յաւիտեան է ու յաւէրժ...

Ես չգիտեմ որ շահնշահը, երբ մեռնում
է իր սիրահար—թագուհին, հրամայում է
կանչել աշխարհի բոլոր գիտուններին իր
մօտ ու հարցնում է նրանց՝

— Ի՞նչպէս յաւերժացնեմ մեր սէրը.

— Թաղիր նրան քո հոգում...

— Սաթիկս, դու եկար, վերջապէս...

— Ի՞նչ խենթն ես դու, միթէ ես կարող
էի չգալ.

— Ես վախենում էի.

— Խենթ.

Իմ համբոյրից հալւեց նա, չքացաւ...

Լուսաստղը ցնորում էր երկնքում...

Ու ես սիրեցի լուսաստղը...



ՀԱՅ ԾԻԾԱՂԸ

ԽԵԼԱՅԵՈՐ

ՆՐԱ ԾԻԾԱՂԸ ԽԵԼԱՑՆՈՐ

—Անաստանձ, քարասիրտ, հերես գու...

—Ո՞ւր ես գու, արձագանքեց կանչը սիրահար աղջկայ ծաղկալից ձորում:

—Ես մաշուում եմ քո կարօտով... Ես հալում եմ քո կրակ սիրուց—հոսում էին նրա տլմազ արցունքները այրուղ...

Նրա ալմազ արցունքները այրուղ, որոնցից մի աղբիւր կազմեց, վճիտ, կարկաչուն...

—Ա՛խ, Աստանձ, ի՞նչ կըլինի, որ ես մեռնեմ էստեղ. էլ ես չեմ ուզում վերագանալ տուն, էլ ես չեմ ուզում ապրել առանց իմ սիրած եարին.

Ու նա մեռնում է:

Նրան գտնում են ձորի մէջ, թաղում են նորածին աղբիւրի ակունքների մօտ ու ձորն էլ անւանում են «Արցունքի ձոր»:

Հիմա էդ ձորում, էդ դէպքից յետոյ ծաղիկները երբէք չեն ամբողջովին բացւում: Նրանց թաւիշ տերեւները սեղմւած են իրար...

Ու չունեն նոքա ոչ գարուն, ոչ ամառ...

Հիասքանչ էր Սաթօն:

Նա սիրում էր երկար, մեաքսանման վարսերը թափել կիսամերկ մարմնին ու մեռնակ իջնել Արցունքի ձորը:

Ի՞նչ լաւ է էդ ծաղկալից ձորը, կրակարևի ոսկեշող մազերով պարուրած...

Առաւօտից մինչ իրիկուն, այնտեղ թա-

փառում էր Սաթօն, աղօթում էր անբախտ սիրահար-աղջկայ համար ու միշտ տուն վերադառնալուց առաջ, չոքում էր արցունք—աղբիւրի ակունքի մօտ, թիջում էր մետաքս մագերը, պոկում էր մի քանի գունատ ծաղիկներ, մագերը զարդարում նրանցով ու տուն էր վազում...

Մի անգամ գիւղի ջահէլ հովիւը որոնելիս իր կորցրած ոչխարին, մտաւ Արցունքի ձորը:

Էդ ժամանակ գեղեցիկ Սաթօն չոքած աղբիւրի մօտ, վարսերն էր զարդարում ծաղիկներով:

Հովիւը ջահէլ տեսաւ նրան ու քարացաւ:

—Էդ էն Սաթօն է, որի զովքը ամենքն են անում...

Այդ օրւանից հովիւը—սիրահար՝ Սաթօնից գաղտնի, արեւի մայր մտնելուց առաջ, միշտ իջնում էր Արցունքի ձորը, նայում էր նրան՝ չքնաղ Սաթօնին, մինչ նա զարդարում էր մագերը մետաքս գունատ ծաղիկներով ու տուն էր դառնում...

Մի օր հովիւը ջահէլ, լուսարացին՝ երբ գունատ արեւիքը դեռ օրօրում էր իր կրթնքում այլևս լուսաստղին, իջաւ Արցունքի ձորը:

Նա ուշի ուշով թափառեց ցօղազարդ ծաղիկների մէջ, մօտեցաւ աղբիւրին, որտեղ միշտ լուսարացի պէս սիրուն Սաթօն էր չոքում, կուցաւ, համբուրեց ծաղիկները, գրպանից հանեց մի փոքրիկ դանակ ու մի ձկուն եղէգ կտրելով, սկսեց տաշտշել նրան...

Սրինգ էր նա շինում, որ իր Սաթօն նրանով գովէ, սրինգ էր շինում, որ իր Սաթօն նրանով կանչէ...

Իր որոշ ժամին հկաւ Սաթօն, թափառեց Արցունքի ձորում ու իրիկունին մօտ՝ երբ պատրաստւում էր նա վարսերը զարդարելու գունատ ծաղիկներով, լսեց սիրախնթ ջահէլի սրնգի ձայնը ու ապշեց...

—Էդ արդեօք ծաղիկներ չէն լեղու ստացած՝ արցունքւոյ աղջկան գովում...

—Էդ էն սիրահար աղջիկն է, հառաչելով իր եարին կանչում...

—Էդ աղբիւրն է այլևս թշառ կոյսի հուր արցունքներին...

Ու կարծես ծաղիկներն էլ զգացին Էդ սիրաձայն սրնգի ոյժը անհաս՝ բացեցին իրենց տերեւները թաւիշ, քաղցրաւունգ երգը լսելու...

Երգը լսեց Սաթօն երկար, անհամբեր սպասեց երգի կրկնւելուն, բայց նա էլ չէ կրկնեց...

Ու սիրտը կոտրւած վերադարձաւ տուն՝ մագերն անկարգ, սուսնց ծաղիկներին...

Ծաղիկներն էլ իսկոյն փակեցին իրենց զլուխները սգազարդ...

Միւս օր Սաթօն սովորականից վաղ իջաւ Արցունքի ձորը, թափառեց երկար, բեղաբեց ու պարկեց աղբիւրի մօտ հանգստանալու, երբ լսեց նորից էն զիւթոյ սրինգի երգը...

Ու իսկոյն վաղեց գէպի սրնգի ձայնը գրաւիչ...

Արցունքի ձորի խորքում նստած էր հո-

վիւրը ու լուսաբացին տաշտձ սրինգը սեղմած
շրթունքին ածուժ էր...

— Ինչ լաւ ես ածուժ... Արցունքի ձորի
ծաղիկները փակ բացուժ են, երբ դու հըն-
չուժ ես քո սրինգը քաղցրաժայն... Ես սի-
րուժ հմ քո երգը:

— Ծիծաղոժ ես, ես լաւ չհմ ածուժ...
Քո ձայնը աւելի քաղցր է իմ երգից...

Այդ օրւանից սկսաժ Սաթօն ու հովիւր
միասին էին իջնուժ ձորը Արցունքի:

Սիրահար հովիւր այրուժ էր գիղիցիկ
Սաթօյի կրակով...

Սաթօն էլ զմայլուժ էր նրա երգով...

Մի անգաժ Սաթօն ուղից ինքն էլ ածիկ
էդ սրինգը գրաւիչ:

— Երգիչս, տոժ սրինգդ ես, էլ ածեմ:

Սրինգը վերցրից, սեղմից ալ շրթունքին,
մի անգաժ ուժգին փչից ու չարաժժի ման-
կան պէս մի կողմ նետելով սրինգը, ծիծա-
ղից՝

— Ես չեմ կարող...

Նրա ծիծաղը՝ արծաթի պէս կարկաչուն,
փուից ամենուրեք...

Նրա ծիծաղը՝ Սողոմոնի սիրոյ պէս խե-
լացնոր, պարուրից ձորը Արցունքի:

Ու այդ հոգեմտի ծիծաղից, հովիւր ջա-
հէլ հալւից իր տեղում...

Ծաղիկները ձորի բացեցին իրենց տե-
րէները թաւիչ ու էլ չփակւան...

Ծաղիկները, որոնք չունէին ոչ գարուն
ոչ աժառ...

ԵՐԶԱՆԿՈՒԹԵԱՆ ԵՐԳԸ

(«Ցնորքի համբոյր»-ից)

Արշալոյսին՝ երբ արեւելքի գունատ հո-
րիզոնում աստղերն են մարւում, լուսաբա-
ցին՝ երբ արեւելքի շափելի կրծքից լու-
սաստղն է ծագում արցունք պսակը ճակա-
տին՝ ես սիրում եմ այցելիկ մարդուն, շոյիկ
նրա մետաքս վարսերը, համբուրել նրան...

Նա այդ գիտէ, չգիտեմ, նա միշտ թըմ-
բած է լինում...

Երբ արեւ կարօտով պատանին խելաւ իր
չքնաղ սիրահարին համբոյր է նւիրում,
երբ անգուստ տէնչով խենթացած ջահէլը
շուրթերն է ծծում իր հիասքանչ դիցունու,
այդ ես եմ լինում, նա ինձ է գրկում...

Նա այդ գիտէ, չգիտեմ, նա միշտ այդ
ժամին խենթ է լինում...

Երբ ոսկէ հէքեաթի կախարդ կարկաչով
մարդն է հմայում ու ցնորք երազով ցաւ
ու վիշտ մոռցած նրա սիրտն է դարկում
ուրախ, երբ նա կրքագիղ արեւի բոյրով
արբած, խենթացած կեանքին է փարւում,
այդ ես եմ լինում, նա ինձ է փարւում...

Նա այդ գիտէ, չգիտեմ, նա միշտ ար-
բած է լինում...

Խ Ե Ն Թ Ը

Հերարձակ գիշերն է փռել իր անթափանց ու խաւար շղարշը մութիւ Անտառի ծառերն են համբուրւում կրքարար խաւարի հետ:

Մէկը անտառի խորքում արցունք էր թափում՝

—Ա՛խ, ո՛ւր ես, ես քեզ սիրում եմ ու այրւում եմ քո արեւ-կարօտով, իմէ՛ր-թագուհի... Դու այդ գիտե՛ս:

—Էդ ո՛ւմ ես կանչում, հարցրեցին տերեւները անտառի, լսելով ջահէլ սիրահարի կանչը աղէկաւ:

—Չ'գիտեմ, մէկին... Աշխարհի երեսին մէկը կայ, ես նրան եմ սիրում ու չգիտեմ ո՛ւր է նա:

—Էդ անտառների ու քարափների հրաշեայ, հէքեաթագեղ գաղէլը չէ՞ արդեօք, որին փնտրում ես դու:

—Չ'գիտեմ, նա գեղեցիկ է... ասաց պատանի սիրախենթն ու արցունքելով անտառը ընկաւ նրան փնտրելու...

* * *

Դեռատի կոյսի կրծքի պէս օրօրւում ու

հետւում էր լիճը, նորածին ոսկէ-արեւի շողերի տակ...

Ու մէկը լճափին խենթօրէն արցունք էր թափում՝

—Ա՛խ, ո՛ւր ես, ես քեզ սիրում եմ ու այրւում քո հուր-կարօտով, իմ ցնորք-թագուհի... Դու այդ գիտե՛ս:

—Էդ ո՛ւմ ես կանչում, հարցրեցին բերդաւանման կոհակները լճի, լսելով թշւառ սիրահարի կանչը լաւահառաչ:

—Չ'գիտեմ, մէկին, աշխարհի երեսին մէկը կայ, ես նրան եմ սիրում ու չգիտեմ ո՛ւր է նա:

—Էդ արծաթ ջրերի սպիտակաթե ու նազան կարապը չէ՞ արդեօք, որին փնտրում ես դու:

—Չ'գիտեմ, նա գեղեցիկ է... ասաց սիրախենթ պատանին ու լիճը նետեց նրան փնտրելու...

ՅԷՔԵԱԹ.

Նրանք սիրում էին իրար:

Մի օր՝ հրը նրանք իրարու գրկում այրում էին հուր-համբույրների տոջօրող կըրքով, զգացին իրենց երջանկութիւնը անհաս ու հեկեկացին...

Նրանց բիւրիղի պէս մարուր, ալմազի պէս կրակոյ արցունքի մալգարաւէնման կաթիլները հոսում էին առատօրէն ու խառնւում իրարու...

— Ես սիրում եմ քեզ...

— Ես պաշտում իմ քեզ...

Ու նրանց երջանկութեան բիւրիղ արցունքներից մի լիճ գոյացաւ...

* *

Նրանց բաժանեցին...

Երկու սիրահարները ջահէլ, իրարուց հեռու, իրարու կարօտ արցունքեցին դառն ու նոցա արեւ-կարօտի արիւն արցունքներից երկու այրւող աստղեր գոյացան...

Նրանք արցունքոյ լուսարացին ծաղում են արեւը ու ցոլում են բիւրիղ ու վճիռ սիրոյ երջանկութեան լճի մէջ:

ՍԻՐՈՅ ԱՆՈՒՐԶ,

Մէկը գիշերով ծովափին արցունք էր թափում՝

— Թագունիս ..

Նա տեսաւ շուշաններին ու աստղերին. —

— Ի՞նչ գունատ են շուշանները ծովի, արդեօք հիւսն են սիրում...

— Աստղերը երկնի հիւսն կարօտով են այրւում...

Ու յիշեց նրան՝ Թագունիս...

Նա այրւում էր...

Նրանք երկուսով ծովափին համբուրւում էին.

— Կախարդ... պաշտելիս...

Նա տեսաւ շուշաններին ու աստղերին. —

— Շուշաններին հիւսն է արդեօք գուրգուրել...

— Աստղերը երկնի հիւսն են քնքշօրէն ծաղում...

Ու նայեց նրան՝ Թագունիս...

Նա սիրում էր...

Մէկը գիշերով ծովափին, աղօթք էր անում.

— Ես կըմեռնեմ... Չէ՞ որ նա էլ մեռաւ...

Նա տեսաւ շուշաններին ու աստղերին.

— Ո՞վ է արդեօք շուշաններին մահ տւել...

— Աստղերը երկնի հիւսն կարօտից են գուրգուրել...

Ու յիշեց նրան՝ Թագունիս...

Նա մեռնում էր...

ՆՐԱՆՑ ՄԵՐԸ

Պատանին ու Փէրին սիրում էին իրար:

—Աստուծա...

—Յոյսըս...

Ու նրանք երջանիկ էին...

Պատանին ծովից մարգարիտ էր հանում
իր Փէրուն զարգարելու համար:

Փէրին անտառում ծաղիկներ էր հաւա-
քում իր յոյսին պատկ հիւսելու համար:

—Խէնթա... խրտեղից արեին էդ շողը
այրող...

—Աչքերիդ կրակէն ու ցոլքէն է գողտ-
նում.

—Ես գեղեցիկ չեմ:

—Դու ամենագեղեցիկն ես, թագունինե-
րից էլ գեղեցիկ...

Մի անգամ թագաւորը ման գալիս տե-
սաւ Փէրուն.

—Չե՞ս ուզում թագունի լինել:

—Չէ, ես թագունուց էլ գեղեցիկ եմ:

Միւս օրը թագաւորը հրամայել էր Փէ-
րուն բերել իր մօտ:

—Դու ինձ երբէք չե՞ս սիրելու...

—Թող ինձ մենակ թափառեմ պալա-
տումդ, ինձ մի նայիր ու ես կսիրեմ քեզ...

* *

Պատանին ծովից մարգարիտ էր հաւա-
քում արցունքելով...

—Ո՞ւր էս զարդարիլու

—Փէրուս հետքերը, որոնց թագաւորը
մոռացաւ վերցնել անտառի խոտերի վրայից...

* *

—Ի՞նչ կապոյտ է երկինքը... Փէրուս շո-
րերին է նման...

—Ի՞նչ սպիտակ էր կուրծքը Փէրուս...
արդեօք ինչի՞ է նման...

Ու նա լեռները բարձրացաւ...

Փէրին պալատում, յիշում էր միշտ՝

—Յոյսըս...




...
...
...
...
...

...
...
...
...
...

...
...
...
...
...

...
...
...
...
...



ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.

Պատրաստ է տպագրութեան համար՝
«Յնորքի համարյորը» ղրամա-հէքեաթ.

Պահեստը Վահրամեանի գրավաճառանոցում, Յանկացողները ղիմեն՝

Александрополь, книжный магазинъ М. Вахрамяна.

ՀՀ Ազգային գրադարան



NL0370133

56.890.

